

ԳԻՏԱԿԱՆ ԵՍՏԱՇՐՋԱՆ՝ ԵՎԻՐՎԱԾ ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ

Խոշորագույն հայագետ Մանուկ Արեղյանի ծննդյան 125-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը, որ կազմակերպել էին ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան և Երևանի պետական համալսարանը, տեղի ունեցավ 1990 թ. մարտի 23-ին, Բացման խոսքում ՀԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը, ընդունելով նշանավոր գիտնականի, բաղաձայնի և հայրենասերի հուժկու կերպարը, կանգ առավ նրա անատականության դիմորդ գծերի վրա, որ և են, մասնավորապես, փաստերի նկատմամբ ծայրահեղ հարգանքը, հզոր տրամաբանությունը, վերլուծական և համադրական կարողությունները, սթափ վերաբերմունքը թե՛ հետազոտվող նյութի, թե՛ գիտական տեսակետների հանդեպ: Հայ դասական բանասիրության լավագույն ավանդույթները և XIX դարի վերջի եվրոպական գիտության նվաճումները կատարելապես յուրացրած Արեղյանն իրենով մարմնավորում էր մասնագիտությունների մի փունջ՝ բանագիտություն, բանասիրություն, գրականագիտություն, լեզվաբանություն և պատմություն, որ և գիտնականին հնարավորություն է տվել բազմակողմանիորեն և միասնական հայացքով դիտարկելու իր հետազոտության առարկաները, հասնելու նրանց բուն էությանը: Դրա լավագույն օրինակն են Արեղյանի աշխատությունները Խորենացու վերաբերյալ, մասնավորապես նրանցում արծարծված կողմնորոշիչ գրույթները Պատմահոր ապրած ժամանակի և նրա երկրորդ առկա բանահյուսական կտորների մասին: Արեղյանի անվան հետ են կապված մեր մատենագրության ընդերքից հանված «Պարսից պատերազմ» հնագույն էպոսի, ապա և «Սասմա ծոեր» հերոսավեպի հավաքման ու հետազոտման գործը, արդի հայերենի ուղղագրության բարեփոխումը, հայոց հին գրականության կոթողային ուսումնասիրությունը և այլն, բոլորն էլ հետազոտողի անհուն կարողությունների ժողովրդին ծառայելու փայլուն վկայագրեր և մեզ այս զովարին ժամանակներում ուժ ու կորով հաղորդող արժեքներ:

«Մանուկ Արեղյանի լեզվագիտական հայացքների արդիական արժեքը թեմայով ղեկուցման մեջ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գևորգ Զահուկյանը նեց, որ XIX դարի բերականա-

գիտության տեսական սկզբունքները յուրացրած և իր հետազոտություններում կիրառած Մ. Արեղյանը սոսկ հետևող չէ: Քերականական իր ուսմունքի բազմաթիվ կետերում նա բացարձակապես ինքնուրույն է և իր հայացքներով շատ ղեկավարում ժամանակից առաջ է անցել: Ստեղծագործաբար կիրառելով գերմանական լեզվաբանության մեջ շրջանառու որոշ զաղափարներ, նա մասնավորապես հայերենի լեզվաբանության մեջ մտքերը իսկական և անխակական լարգությունների զաղափարը: Արեղյանի ֆորմալիզմը առաջավորական էր. լեզվական ձևերի քննությանը նա տալիս էր նախնական, առաջնային տեղ, որից էլ գնում էր ղեկի լեզվական, բերականական իմաստները: Ինքնուրույն էր խոսքի մասերի նրա ուսմունքը և նախորդում էր արդի լեզվաբանության մի շարք զարգացների համապատասխան բաժանումներին: Գիտնականի ձևաբանական ուղղագրական ուժգույնը, նեց ղեկուցողը, բխում էր մեր իրականության մեջ տիրող վիճակից և նպատակ ուներ վերացնել ուղղագրության մեջ եղած բառեր, նորմավորել լեզվական իրողությունները: Այսօր Արեղյանի համ ուղիտական շարժառիթներով կատարվող հարձակումները անտեղի են, հիշեցնելով 1930-ական թթ., երբ գիտնականին մեղադրելով ֆորմալիզմի մեջ՝ քաղաքական հետևություններ էին անում: Արեղյանն այն հաղվաղեկ ղեկավար էր, որի լեզվաբանության և գրականագիտության մեջ խաղաղած առաջընթաց դերը պահանջում է արդարամիտ և պատշաճ գնահատություն:

Բանասիրության ղեկուցող Սարգիս Հարությունյանը Մ. Արեղյանի աշխատություններում հայ վիպասառասպելական ստեղծագործության լուսաբանությանը նվիրված իր ղեկուցման մեջ հանգամանորեն ներկայացրեց գիտնականի մշակած հայ վիպական բանահյուսության տեսությունը, որը փաստաբան սկզբնավորվել էր տակավին 1889 թ., Եուշիում հրատարակված «Սասնա ծռերի» երկրորդ տարբերակի առաջալանում: արծարծված նկատողություններով և ապա խորացվել, հիմնավորվել և ամրապնդվել Աղղային վեպը (1889 թ.), «Հայ ժողովրդական հավատալիքը» (1889 թ.), «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու «Հայոց պատմության մեջ» (1899 թ.), «Հայ

ժողովրդական վկայ» (1908 թ.), «Վիպական Երգեր» (1940 թ.) և այլ ուսումնասիրություններում և, վերջապես, 1930-ական թթ. ավարտված և 1966 թ. միայն հրատարակված «Հայ վիպական բանահյուսություն» հիմնարար աշխատության մեջ՝ տալով հայ վիպական բաղմադարյան ավանդության պատմատիպարանական տեսություն և դիտական շրջարժանում և Հավատարմի իր ստեղծագործության հիմնական մեթոդին՝ պատմականությանը, Արևելյան վիպական ավանդության բոլոր ձևերն ու դրսևվորումները քննում է նրանց գոյացման հարաշարժ գործընթացում, պատմական պայմանների և հայ ժողովրդի պատմական կյանքի սերտ առնչությամբ, դուզահեռ կիրառելով նաև համեմատական մեթոդը, դիմելով նեղվորոպական ցեղակից և հնուավոր ժողովուրդների մշակութաբանական համապատասխան երևույթներին և հանգելով մեծարդյուն հետևություններին Այլընտրանի այս տեսությունը հայ բանասիրական մտքի կարևոր նվաճումներից է, այն իր հետ բերում է դիտական նոր և ճշգրիտ մոտեցումներ, պատմական ստույգ մեթոդ և մեթոդաբանություն, դիտական նոր հնուականներու Անկախ վիճահարույց որոշ դրույթներից, այն իրեն դիտական համակարգ ղեկ երկար կարող է հիմք ու ելակետ ծառայել հայագետների զանախ սերունդների համար:

«Մանուկ Արեղյանը և հայոց հին գրականության աղղային յուրահատկության հարցը թևալով ղեկուցեց բանասիրական դիտությունների թեկնածու Վարազ Ներսիսյանը Թեպետ հայոց հին գրականության աղղային յուրահատկության հարցի մասին Մ. Արեղյանը չի թողել հատուկ հետադոտություն, բայց դրան անդրադարձել է իր տարբեր աշխատություններում և, մասնավորապես, «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր մոնումենտալ ուսումնասիրության մեջ՝ ի հայտ բերելով որոշակի ձևավորված հայացք: Զեկուցողի կարծիքով, Մ. Արեղյանի այս հայացքը բխում է հայոց հին գրականությունը ժողովրդի պատմական կյանքի, ոգու և ձգտումների անմիջական արտացոլք դիտելու իր իսկ առաջ քաշած և հաստատած հիմնադրույթից: Հայոց հին գրականության բովանդակության և ձևի յուրահատկությունները Արեղյանը մատնեցել է թե՛ գրականության զարգացման տարբեր շրջանների զլխավոր միտումը բնութագրելիս, և թե՛ արեւելյան ու եւրոպական այլ գրականությունների համեմատությամբ հայոց հին գրական երևույթների ինքնատիպությունն ու վաղեմությունը հաստատելիս:

Անդրադառնալով Մ. Արեղյանի նամակագրական ժառանգությանը, բանասիրական գի-

տությունների ղոկտոր Պրոն Հակոբյանն ասաց.

— Ինչպես բաղմադարյան հայոց գրականությունը, այնպես էլ նրա ամենահղինական վոր հետադոտողի կյանքը եղել է տեական մաքառում հանուն աղղային մշակույթի ճշմարտացի մեկնարանման ու ժողովրդականացման, հանուն հայադիտության բարձր հղինականության համախարհային դիտության առյանում: Արեղյանը դրքերի մեջ թաղված անձնավորություն չէր, այլ նաև դիտության մեծ կաղմակրալիչ և շահախնդիր հայ ժողովրդի բաղաքական աղատության և բարղավաճման: Նա փոխախաղահն էր Հայաստանի անկուսակցականների միության, որի ծրագրին այսօր էլ ունի ուսանելի շատ կղմեր: Արեղյանը, լինելով 1925 թ. ստեղծված Հայաստանի դիտության և արվեստի ինստիտուտի նախագահ, փաստորեն ստեղծում է մեր առաջին հայադիտական հետադոտական հաստատությունն իր բաժանմունքներով և ստեղծագործական լիարյուն կյանքով: Նամակները հավաստում են, որ 1930-ական թթ. Արեղյանը, ծանրաբեռնված չլինելով վարչական աշխատանքով, կաղմակրալում է Հ. Պարոնյանի երկերի հրատարակությունը, հոգում է Ա. Շիրվանզաղին հոբելյանի անցկացումը, հրատարակում իր «Հայոց լեռնի տաղաշափությունը»: Արեղյանին է պատկանում էպոսի համահավաք տեքստի պատրաստման և 1000-ամյա հոբելյանի անցկացման զաղափարը: 1940-ական թթ. նամակներն ավելի տխուր են. շարունակվում էր հայաժանքը նրա նկատմամբ՝ տեսական սահմանափակումներով ղառնացնելով նրա կյանքը: Արեղյանը Հայաստանի ակաղեմիայի հիմնադիրներից է, և այսօր էլ հայ բանասիրության մեջ առկա առղղ հոսանքի ակունքների մոտ կանգնած է նրա տիտանական կերպարը:

«Մանուկ Արեղյանը և հայերենի ողղագրությունը» փաւտալից ղեկուցման մեջ բանասիրական դիտությունների թեկնածու Պաղել Շարարխանյանը քալլ առ քալլ ներկայացրեց Արեղյանի ջուրջ 35-ամյա գործունեությունը՝ նվիրված հայ լեղվարանության և, մասնավորապես, ողղագրության հարցերին: Զեկուցողը նշեց, որ 1892 թ. հրատարակված «Հայոց լեղվի ողղագրությունը» աշխատությամբ հայ լեղվարանության մեջ առաջին անգամ Արեղյանը որոշ հաստատուն կանոնների տակ է գնում աշխարհարարի ողղագրությունը, 1908 թ. առաջին անգամ մեղանում հրատարակում ողղաղագրական հղվածների ժողովածու՝ թեկադրության և ընթերցանության համար: Հատկանշական է, որ 1913 թ. «Արարատում» Արեղյանը հայերենի ողղագրության փոփոխությունների հարցը քննում է բաղմակողմանիորեն՝ տար-

բեր հայեցակետերի հաշվառումով: 1921 թ. ՀեՍՀ լուսավորության բոլորի հրավիրած խորհրդակցությունում Արեղյանը կարդում է մի զեկուցում ուղղագրության հեֆորմի մասին՝ նշելով վերջինիս կիրառման գործնական սկզբունքները: Նույն թվականին լույս է տեսնում նրա «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության» գրքուկը՝ նոր ուղղագրության առաջնորդ-ուղեցույցը, իսկ 1925 թ.՝ «Ուղղագրության հեֆորմը» երկը: Նոր ուղղագրությունը ժամանակին և այնուհետև նախնական ուղղակի ընդդիմության, թեպետ օր-օրի ստվարանում է նաև նրա նետերի բանակը մայր հայրենիքում և արտերկրում, որն ընդունում է նոր ուղղագրության առավելությունները: Վերջինս լիովին համապատասխանում է արդի հայերենի պահանջներին և հիմնավորված է նշյունաբանորեն, մանկավարժորեն և պատմականորեն:

Նստաշրջանի մասնակիցները հուզմունքով ունենցեցին բանասիրական գիտությունների զոկտոր Ավիկ Խաչակյանին, որը ներկայաց-

րեց Ա. Ետիբ Խաչակյանի հրաժեշտի խոսքը, գրված 1944 թ. Նրևանում, Մանուկ Արեղյանի մահվան կապակցությամբ և կարդացված Բանաստեղծի կողմից՝ գիտնականի թարմ շիրիմի մոտ: Դա յուրատեսակ զնախատությունն է գիտության այն «տիտանի», առանց որի ճանկարելի է պատկերացնել մեր կուլտուրական կյանքը:

Արեղյանի մասին հուշերով հանդես եկան բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը, Արեղյանի նախկին ասպիրանտ, բանասիրական գիտությունների թեկնածու Ալիս Մանուկյանը և Արեղյանի թոռնուհին՝ բանասիրական գիտությունների թեկնածու Հասմիկ Արեղյանը, հատուկ նշելով վաստակաշատ գիտնականի մարդկային առարինությունները, նրա մեծ դերն ու վաստակը իբրև գիտության հմուտ կազմակերպչի, յոգատար ուսուցչի ու մանկավարժի:

Նստաշրջանի աշխատանքն ամփոփեց ՀեՍՀ ԳԱ ակադեմիկոս էդվարդ Զրբալյանը:

Հ. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ